Ն. Կ. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻՆ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ

Խաչատուր Էրզրումեցու (1666—1740) «Բովանդակութիւն ամենայն ուսմանց» կամ՝ «Համառոտական իմաստասիրութիւն» մեծածավալ աշխատության մեջ՝ երաժշտության վերաբերող շահեկան մի բաժին կա՝ «Յաղագս երաժշտութեան»[2] ընդհանուր խորագրի տակ, որը մինչև այժմ վրիպել է հայ երաժիշտների ուշադրությունից։ Մինչդեռ այն վաղուց գիտական շրջանառության մեջ պետք է մտած լիներ արդեն, թեկուզ և միայն խազաբանության հետ ուղղակիորեն առնչվող իր մասով։

Նկատի ունենալով, որ հիշյալ աշխատությունը հնատիպ է (ուստի և հազվագյուտ), իսկ մեզ հետաքրքրող նրա բաժինը՝ ծավալով փոքր, վերջինս ամբողջությամբ բերում ենք այստեղ (թեև այն զերծ չէ ավելորդաբանությունից, գլխավորապես շափածո շարադրության պատճառով), նախապես հակիրճ անդրադառնալով նրա բովանդակությանը։

Խաչատուր Էրզրումեցու աշխատության մեջ «Յաղագս երաժշտութեան» բաժինը բաղկացած է երկու գլխից՝ «Յաղագս սահմանի երաժշտութեան» և «Տակաւին յաղագս սահմանի երաժշտութեան»։

Ըստ էության, սակայն, «Յաղագս երաժշտութեանը» որպես ամբողջություն ստորաբաժանվում է չորս մասերի, այնպես, ինչպես դա ցույց է տրված բնագրի ձախ լուսանցքում մեր կողմից փակագծերով նշանակված Ա, Բ, Գ և Դ տառերի միջոցով։

Ա

Էրզրումեցին նախ շարադրում է իր երաժշտա-գեղագիտական գաղափարները, երաժշտության մասին խոսելով որպես ուսումնականի չորս ճյուղերից մեկի, ինչպես նրանից դարեր առաջ, նույնը արել էր Դավիթ Անհաղթը[3]։ Ահա թե ինչու նա, միջնադարում գրեթե ամենուր տարածված մտայնության համաձայն[4], երաժշտությունը համարում է «գիտութիւն» և «գիտնական ճանաչութիւն»։ Բայց դրանց տակ նա հասկանում է և երաժշտական գիտությունը և երաժշտական արվեստը, այդ թվում՝ աշխարհիկ և հոգևոր երգարվեստը, գործիքային նվագն ու վոկալ-գործիքային երաժշտությունը։ Ըստ որում, վերջինիս կապակցությամբ Էրզրումեցին նկատում է, թե այն՝ «համաձայնութիւն գրկի»։ ... «Զի համաձայնեցուցանէ... զայնոսիկ, որք ձայնք կոչեալք են, և զայնոսիկ, որք գործիք են»։

Այնուհետև հեղինակը անդրադառնում է երաժշտության գեղագիտական և բարոյագիտական ներգործության խնդիրներին։ Նա գտնում է, որ մասնավորապես վոկալ-գործիքային աշխարհիկ արվեստը, «զայնպիսի նուագս ընդունի... որք լսողութեան ախորժք են. այնմիկ, որ լսէ, հաճոյք են։ Որք անուշաբար ելանեն. և անուշաբար իջանեն»։

Բայց երաժշտությունը, իմաստասերի կարծիքով, միայն հաճույք չէ, որ պատճառում է։ Այն նաև «օգտակար» ու «շահաւէտ» է, մանավանդ երբ «պարկեշտ» ու «համեստ» է ըստ բովանդակության։ «Երգք և նուագք ընդունելիք,— գրում է նա,— և յօժարաբար գրկելիք։ Այնոքիկ, որք պարկեշտք լինին. որք զհամեստութիւն ունին։ Քանզի օգտակարք գտանին. մեզ շահաւէտք են-թակային»։

---

1 *Սույն հեղինակի ու նրա տվյալ աշխատության մասին,— որը «այն ժամանակվա մեր կրոնամոլ գրականության մեջ պետք է մի փայլուն բացառություն համարվի»— տե՛ս Լեո, Հայկական տպագրություն, հատ. 2, Թիֆլիս, 1902, էջ 173—188։*

2 *Համառոտական իմաստասիրութիւն, Շարադրեալ ի Խաչատրոյ նուաստ վարդապետէ Էրզրումեցւոյ, հատ. Բ, Վենետիկ, 1711, էջ 529—535։*

3 Դ ա վ ի թ Ա ն հ ա ղ թ, *Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 130։*

4 Р. И. Г р у б е р, История музыкальной культуры, т. I, ч. первая, М.—Л., 1941, стр. 519, 520.

Այստեղից հեղինակը փաստորեն անցնում է հոգևոր երգերի գերի ու նշանակության հարցին, երգեր, որոնք՝ նրա ասելով՝ ունկնդրի հոգում գթության, ողորմածության, զղջության և ապաշավության զգացմունքներ են առաջացնում («զշարժմունս զարթուցանեն»). և նույնիսկ «զմեզ արտասուեցուցանեն... վասն մեղաց և յանցանաց. վասն գործոց մերոց չարաց»։

Երաժիշտների մասին Էրզրումեցին խոսում է հրատարակվող բնագրի Գ հատվածի վերջում (խազերին վերաբերող տեսությունից հետո)։

Մեր իմաստասերը երաժշտից պահանջում է «բնութիւն» (բնածին շնորհք) կամ «յարմարութիւն», որ է ասել՝ Երաժշտականութիւն: Իսկ սա՝ ըստ Էրզրումեցու «ի չորից իրաց բաղկանայ». «ընտրողական լսողութիւն», «լաւ երևակայութիւն», «ըմբռնող յիշողութիւն» և «արտաքերական զօրութիւն» (որի տակ պիտի հասկանալ վերարտադրելու կարողությունը, որպես նախադրյալ)։

Ահա այս բնածին հատկություններն են, որ հետագայում անհրաժեշտաբար պիտի լրացվեն. նախ՝ ուսումով, ապա և՝ վարժությամբ: Որովհետև՝ «որք յինքեանց երգել ոչ մարթին. այնոքիկ ուսանիլ պարտին»։ Եվ՝ «որք ուսեալք են, պարտին վարժել. պարտին զինքեանս կրթել, մարզել»:

Խաչատուր Էրզրումեցին ուշ միջնադարի մեր առաջին մտածողն է, որը հատուկ ուշադրություն է դարձնում երաժշտական գեղագիտության հարցերին, և, մի կողմից, վերարծարծելով Հակոբ Ղրիմեցու և Ներսես Լամբրոնացու[5], Սարկավագ Վարդապետի[6] և նույնիսկ Դավիթ Անհաղթի[7] մի շարք շահեկան մտքերը, ու, մյուս կողմից, մասամբ նաև զարգացնելով դրանք, կանգնում է քիչ ավելի ուշ գալիք նոր գաղափարների շեմքին[8]։

Բ

Այստեղ Էրզրումեցին պարզում է հայկական ութ-ձայնի դրությունը, որը, մեր հեղինակի վկայության համաձայն, նախ և առաջ յուրատեսակ տոնայնական մի դրություն է։ Ըստ այդմ՝ ած-ից ղկ գոյանում է՝ ասենք՝ գեթ ձայնեղանակներին հատուկ տեսիտուրների առումով ընդհանրապես՝ որոշակի մի աստիճանավորություն, ցածից բարձր, հետևյալ հաջորդականությամբ. ած-ակ-բծ-բկ-գծ-գկ-դծ-դկ: Սրան որպես ապացույց Էրզրումեցին Շարականից վկայակոչում է մարտիրոսաց կարգի «Հարցերը», ըստ ութ ձայների. «Զքեզ արդար», «Սուրբ Աստուած», «Անոխակալ», «Օրհնեմք զքեզ», «Որք զտանջանս», «Զինուորութիւնք», «Յուսացեալքն» և «Առ քեզ Աստուած»։

Պիտի նշել, որ ոչ Նիկողայոս Թաշչյանի[9] և ոչ էլ Եղյա Տնտեսյանի[10] ձայնագրություններում արտացոլված չէ մարտիրոսաց կանոնի «Հարցերի» մեղեդիներին հատուկ տոնայնական կամ առհասարակ տեսիտուրային կարգի այն աստիճանավորությունը, որի մասին խոսում է Խաչատուր Էրզրումեցին։

Այսուամենայնիվ, իմանալով, որ մեր «Աղօթամատոյցը» (և դրա հետ կապված՝ շարականի երգեցողությունը) զգալի փոփոխության է ենթարկվել ուշ միջնադարում[11], հակված ենք մտածելու, թե Էրզրումեցու քննարկվող պնդումը արժանի է լուրջ ուշադրության, որպես ձայնեղանակների կատարման մեջ հնում արմատացած մի ավանդույթի արձագանքը։ Առ այս կարող ենք նույնիսկ մի քանի փաստեր բերել, հետագային թողնելով հարցի բազմակողմանի քննությունը։ Ս. Անդեղյան նշում է, որ «Եբրայեցիք ութաղեա (ութը լարով) քնարին իւրաքանչիւր լարովը կրսկսէին սաղմոսի ութը կանոնները. ասոր հետևելով Յոյներն ալ իրենց ձայները ութի բաժնեցին (օքթո

---

5 Տե՛ս, օրինակ, երաժշտության գեղագիտական և բարոյագիտական ներգործության մասին Լամբրոնացու և Ղրիմեցու գաղափարները՝ մեր «Էջեր միջնադարի հայկական երաժշտական գեղագիտությունից» հոդվածում, «Էջմիածին», 1963, № 11, էջ 52։

6 Տե՛ս անդ, էջ 48, վարժության և կրթության մասին Սարկավագ Վարդապետի մտքերը։

7 Տաղանդի, երևակայության, փորձի և վարժության մասին Դավիթ Անհաղթի ըմբռնումը տե՛ս մեր «Էջեր հայկական վաղ-միջնադարյան երաժշտական գեղագիտությունից» հոդվածում, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. դիտ.), 1961, № 2, էջ 49։

8 Համեմատիր, օրինակ, երաժշտության մեջ «պարկեշտի» ու «համեստի» մասին Էրզրումեցու ասույթը՝ Գր. Գապասաքալյանի առաջ քաշած յուրովի ամբողջական տեսության հետ (Գիրք երաժշտական, Կ. Պոլիս, 1803, էջ 11—12)։

9 Ձայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 915—963։

10 Ե. Տ ն տ ե ս յ ա ն, Շարական Ձայնագրեալ, Ե. մաս, Իսթանպոլ, 1934, էջ 649—691:

11 Վ. Հ ա յ ո ւ ն ի, Պատմութիւն հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ, 1965, էջ 315—345։

իխոս), որուն համեմատ դասակարգուեցան նաև մեր ութ ձայները»[12]։ Մի կողմ թողնելով սաղմոսի հատկապես ութ կանոնի բաժանման սկզբունքի առաջացման խնդիրը[13], Կոմիտասը նույնպես հաստատում է, թե «շարականի եղանակների ութն ձայնի բաժանումը ծագել է ութ կանոն սաղմոսներից»[14]։ Ինչ վերաբերում է ձայնեղանակները երաժշտական գործիքների վրա վերարտադրելու մեթոդին, որին ակնարկում է Անդեղյան, և որի էությունը կայանում է հիշյալ ձայնեղանակներից յուրաքանչյուրը, ասենք՝ լարային անկոթ գործիքի որոշակի մի լարից, կամ (որ նույնն է), լարային կոթավոր նվագարանի որոշակի մի մատնատեղից սկսելու մեջ,— ապա մեզ թվում է, թե այն կիրառված է եղել նաև մեզ մոտ։ Դա երևում է և Առաքել Սյունեցու դիպուկ մի ասույթից և մեր միջնադարյան ձեռագրերում հաճախ հանդիպող «ութ ձայնի փերտե» հատկանշական արտահայտությունից[15], որ է ասել ութ ձայնեղանակներին համապատասխանող մատնատեղերի (փերդեների) շարք։ Իսկ զուտ վոկալ երաժշտության մեջ, որպիսին էր շարականի երգեցողությունը, ձայնեղանակների տոնայնական դրությունը ունեցել է, ըստ երևույթին, տեսական և մի գուցե նաև ուսումնա-կրթական նշանակություն։ Համենայն դեպս, իմանալի է, որ Գր. Գապասաքալյանն էլ, հայոց ութ ձայնեղանակների սկսվածքները հունականի օրինակով ճախարակաձև առաջ բերելով, խորհուրդ է տալիս. «սոքա յիրաւի կրթօղք և վարժօղք են իբր զնորահասսն, որ նախ քան բարձրը սկսելոցն, մեղմ և հանդարտիկ սկսեն ձայնիւ, և ապա դուն ինչ յառաջ երթեալ բարձրանայ, որպէս թէ աստիճան քան զաստիճան ելանելով...»[16]։ Բացի սրանից, ձայնեղանակների աստիճանավորության մի իմաստ կարող են պարունակել նաև չորս բուն ձայները (աձ, բձ, գձ, դձ) համապատասխանաբար բնության չորս տարերքի (հողի, ջրի, օդի և հուրի) հետ կապելու հնավուրց գաղափարը[17], քանի վերջիններս իրոք որ որոշակիորեն աստիճանավորված են պատկերացված եղել[18]։ Մեկ էլ այն հանգամանքը, որ միջնադարյան մի շարք գրչագրերում մեր ութ ձայներն ու երկու ստեղները թվարկվում են ոչ թե ըստ բուն ձայների, կողմերի և ստեղների, այլ հերթականորեն՝ առաջինից մինչև տասներորդը[19]։

Գ

Այս հատվածը նվիրված է շարականի խազերին։ Այստեղ մեր իմաստասերը նախ տալիս է խազերի մեկ ընդհանուր բնութագիրը, ասելով, որ դրանցով ութ ձայները «զարգարին», «պճնին» և «եղանակաւորին», որից հետո նա ճշտում է խազերի թվաքանակը, հերթով անվանակոչում է դրանք ու առաջ բերում դրանց զորությունը յուրովի պարզաբանող բացատրություններ։

Խազերի թվաքանակի և անվանակոչությունների մասին խաչատուր Էրզրումեցին որոշակի կարծիք ունի։ «Թուով քսան և չորք լինին», գրում է նա, անշուշտ ի նկատի ունենալով շարականի հիմնական խազերը, և թվարկում է դրանք հետևյալ հերթականությամբ. շեշտ, փուշ, բուք, պաւոյկ, երկար, սուղ, սուր, բուր, ծունկ, թաշտ, ոլորակ, խունն, վերնախաղ, ներքնախաղ, բենկոռճ, խոսրովային, ծնկներ, էկոռճ, ձակոռճ, խում, փայուր, քարքաշ, հուհայ և զարկ։

Առայժմ մի կողմ թողնենք այն հարցը, թե խազերի հատկապես այս միակցությունը ինչպես և ինչ չափով է կիրառված եղել գործնականում, մեր միջնադարյան ձեռագիր-խազավոր շարակնոցներում։ Դա մեզ այստեղ շատ հեռուն կտաներ։ Պետք է հատուկ նշել սակայն, հօգուտ խաչատուր Էրզրումեցուն, որ մեր գրչագիր և հնատիպ աղբյուրներում հանդիպում ենք խազերի անունների և նշանների մի ամբողջ շարք տախտակ-ցուցակների, որոնք բաժանվում են երեք ուրույն խմբի, և որոնցից մեկը, ըստ խազերի թվաքանակի, անվանակոչության և նույնիսկ հերթականության (վերջինս մեզ հայտնի աղբյուրներից միայն մեկի մեջ քիչ խառնված է պատահականորեն), լրիվ համընկնում է խազերի՝ Էրզրումեցու առաջ բերած միակցության հետ։ Այն՝ «անուանք խազից շարականաց» խորագրի տակ ներկայացված է՝ 1684 թ. Մղրագյուղում գաղափարված Շարակնո-

---

12 Ս. Անգեղյա, Հայ եկեղեցական երաժշտությունը և ձայնագրությունը, Մաղիկ, Կ. Պոլիս, 1903, № 6, էջ 66—68։

13 Վ. Հացունին ցույց է տալիս, որ դա էր՝ «Հայկական բնիկ դրություն մը» (նշվ. աշխ., էջ 151)։

14 Կոմիտաս, Հայոց եկեղեցական եղանակները, տե՛ս Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 106։

15 Տե՛ս, օրինակ, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1748, էջ 297ա։

16 Գր. Գապասաքալյան, Գրքոյկ որ կոչի նուագարան, Կ. Պոլիս, 1794, էջ 198։

17 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7362, էջ 62ա։

18 Հակոբ Ղրիմեցի, Մեկնութիւն Տումարի, Մատենադարան, ձեռ. № 2011, էջ 95ա։

19 Զայնից գիտ ըստ փիլիսոփայից, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6616, էջ 39բ։

ցում[20], XVII դ. ժողովածուներից մեկում[21], Շարակնոցի՝ ոսկանյան առաջին տպագրության մեջ[22] և, մասնավորապես, 1789 թ. էջմիածնի հրատարակությունում[23] (որը ըստ Ռ. Աթայանի «շարակնոցի լավագույն տպագրություններից մեկն» է)[24], և վերջապես՝ Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատությունում[25]։ Սրանով Խաչատուր Էրզրումեցու առաջ բերած խազերի ցուցակը հատուկ կշիռ է ստանում։ Ըստ որում, վերոհիշյալ աղբյուրներում բերվում են խնդրո առարկա 24 խազերի գծագրական ձևերը ևս, հետևյալ կերպ, որոնք, տվյալ խմբի տախտակ-ցուցակներում հիմնականում միատիպ լինելով, և բուն խազավոր ձեռագրերում էլ հանդիպելով, վստահություն են ներշնչում (գծ.)։



Դ

Գալով Էրզրումեցու այն բացատրություններին, որոնք կոչված են այս կամ այն խազի զորությունը պարզաբանելու, պետք է ասել, որ դրանց մեկ կարևոր մասը ոչինչ չասող յուրօրինակ նույնաբանություններ ներկայացնելով (ինչպես խունճի մասին ասվածը թե՝ «և արդ այս խազ զայն վանգ խնճէ, որոյ վերայ իսկ եղեալ է» և այլն), ցավոք, դրական որևէ օժանդակություն չի կարող ցույց տալ։ Բայց այդ բացատրությունների մեջ կան և այնպիսիները, որոնք արժանի են սեեռուն ուշադրության, ինչպես՝ շեշտի, բութի և պարոյկի, երկարի և սուղի ու մի քանի այլ խազերի վերաբերող բացատրական խոսքերը։ Շատ դիպուկ է թաշտի մասին ասվածը, թե՝ «զվանգ նմանեցուցանէ այնմիկ, որ պղնձեայ տաշտ է»։ Եվ, ըստ երևույթին, ճիշտ է Էրզրումեցին, երբ խազերի վերաբերյալ ընդհանուր առմամբ հաստատում է, որ «նոցին ձևք ծանուցանեն զայն, զոր պահանջեն, ցուցանեն»։ Վերջապես իմանալի է նաև, որ Էրզրումեցու մի քանի ուրիշ բացատրություններ էլ օգտակար կարող են լինել, երբ համադրվեն միջնադարյան այլ հեղինակների ասույթների հետ, որոնք, առանձին վերցրած, նույնպես, քիչ բան են հուշում։ Պետք է նշել, օրինակ, որ խոսրովայինի մասին Էրզրումեցու տված բացատրությունը (թե՝ «ոլորաբար երկարէ զայն վանգ, զոր իսկ նշանադրէ») և Դր. Գապասաքալյանի ասածը («ձայն բարձր և ցնթելի»)[26], իրար լրացնում են։

Սույն հատվածի բովանդակությունը Էրզրումեցին իրավացիորեն զետեղում է նոր խորագրի տակ, որպես առանձին գլուխ։ «Ի վեր տեսաք, որպէս գտաք, ի մերայինս նշմարեցաք։ Տեսցուք, զոր նորաբար ուսաք, ի վարդապետաց ընկալաք», գրում է նա, սկսելով այս նոր գլուխը և անցնում եվրոպական ձայնագրության սիստեմի շարադրությանը։ Խոսում է եվրոպական գծային նոտագրության և ձայների օկտավային դրության մասին, բացատրում է ութ հիմնաձայների և չորս ածանցյալ ձայների սիստեմը և հատուկ կանգ առնում ձայներին համապատասխանող թվաշարքի վրա (1—8 կամ 1—10, ըստ սոլմիզացիայի)։

---

20 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9255, էջ 413բ։

21 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6985, էջ 69բ—70ա։

22 Շարակնոց, Ամստերդամ, 1664, էջ 773։

23 Շարակնոց, էջմիածին, 1789, էջ 886։

24 Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 173։

25 Joachimi Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amsteladomi, 1711, էջ 244։

26 Գիրք երաժշտական, Կ. Պոլիս, 1803, հարց 90։

Հետևում է. որ հայկական գիտական շրջաններում եվրոպական նոտագրության սկզբունքներին ծանոթացել են ոչ թե XIX, ինչպես ընդունված է կարծել, այլ դեռևս XVIII դ. սկզբներից։

ՅԱՂԱԳՍ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Գլուխ Առաջին

ՅԱՂԱԳՍ ՍԱՀՄԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

(Ա) Երաժշտութիւն գիտութիւն. և գիտնական ճանաչութիւն.
Որ զնուագել ուսուցանէ. զկերպ երգելոյ ցուցանէ։
Զձայնս եղանակաւորէ. կարգէ և կանոնաւորէ։
Ուստի շուրջ զձայնիւք շրջի. նաև զգործիս ընդունի։
Զգործիս, որք նուագելոյ. որք յարմարք լինին երգելոյ։
Զայսոսիկ հնչեցուցանէ. կանոնաւ գոչեցուցանէ։
Զայնպիսի նուագս ընդունի. և երաժշտութիւն խորհի։
Որք լսողութեան ախորժք են. այնմիկ, որ լսէ, հաճոյք են։
Որք անուշաբար ելանեն. և անուշաբար իջանեն։
Որք անուշաբար բարձրանան. և անուշաբար ցածանան։
Որ մտաւոր, զայս հնարէ. զերաժշտութիւն գտանէ։
Նա կանոնաւորել կարէ. որ մտաւոր, բանաւոր է։
Եւ նա եղանակաւոր է. որ մտաւոր, բանաւոր է։
Երգք և նուագք ընդունելիք. և յոժարաբար գրկելիք։
Այնոքիկ, որք պարկեշտք լինին. որ զհամեստութիւն ունին։
Քանզի օգտակարք գտանին. մեզ շահաւէտք ենթակային։
Զի զտրտմութիւն փարատեն. զսիրտ զուարճացուցանեն։
Եւ զշարժմունս զարթուցանեն. այնոքիկ ընդոստուցանեն։
Զայնպիսիս, որք բարեպաշտք են. բարեպաշտից վայելուչք են։
Շարժեն առ այն, որ գթութիւն. առ այն, որ ողորմածութիւն։
Շարժեն առ այն, որ զղջութիւն. առ այն, որ ապաշաւութիւն։
Ողբալ զմեզս հրաւիրեն. առաջնորդեն և յորդորեն։
Զմեզ արտասուեցուցանեն. և նաև ողբացուցանեն։
Վասն մեղաց և յանցանաց. վասն գործոց մերոց չարաց։
Ածեն առ նա, որ գոհութիւն. առ նա, որ գոհարանութիւն։
Առ ի զԱստուած գովասանել. զնա դրուատել և գովել։
Առ ի զԱստուած փառաբանել. և զանուն նորա մեծարել։
Եւ զԱստուած մեծացուցանել. և զաղաչանս մատուցանել։
Առ ի աղերսել, պաղատել. նաև մաղթել և աղօթել։
Սոքա զմեզ մխիթարեն. զսիրտ ուրախացուցանեն։
Նաև այսք բերկրեցուցանեն. զոգի զմաւեցուցանեն։
Գովասանօք Աստուածայնովք. փառաբանութեամբ վերնայնովք։
Ապա ուրեմն ընդունելիք. և յոժարաբար գրկելիք։
Որք նուագք անուանակոչին. ի միասին երգք անուանին։
Եւ համաձայնութիւն գրկի. յերաժշտութենէ սիրի։
Զի համաձայնեցուցանէ. սա, որ երաժշտութիւն է։
Զայնոսիկ, որք ձայնք կոչեալք են. և զայնոսիկ, որք գործիք են,
Համաձայնութիւն ախորժ է. վասն զի անոյշ հնչումն է։

(Բ) Որպէս ի յայլ մակացութիւնս. և գիտնական հանաչութիւնս։
Ոմանք սկզբունք աւանդին. ծանուցանին, ուսուցանին։
Եւ ի սկզբանց ճանաչին. այնոքիկ, որք վարդապետին։
Այսպէս ի յայսմիկ աւանդին. այնք, որք սկզբունք անուանին։
Եւ ի սկզբանց բաղադրին. այնք, որք նուագք և երգք կոչին։
Սկզբունք ութ մեզ աւանդին. և ի նախնեաց առաջադրին։
Հասարակաբար անուանին. և ութ ձայնք անուանակոչին։

Եւ նա, որ առաջին դնի. առաջի ձայն յարանուանի։
Եւ է, որ ցածագունեղ է. այն, որ խոշորազունեղ է։
Յայնմանէ զօրինակ կալցուք. աստանօր առաջադրեսցուք։
Որ այսպէս անուանակոչի. կարգ մարտիրոսաց անուանի։
Ուստի այն առաջի ձայն է. որ զքեզ արդար կոչեալ է։
Եւ նա, որ երկրորդ եղանի. առաջի կողմն յարանուանի։
Այս քան զառաջին բարձրանայ. և ի միասին նրբանայ։
Ուստի այն առաջի կողմն է. որ սուրբ Աստուած կոչեալ է։
Եւ նա, որ երրորդ գտանի. երկրորդ ձայն անուանակոչի։
Եւ սա քան զերկրորդ բարձրանա. ի միասին անուշանայ։
Վասն որոյ այն երկրորդ ձայն է. որ անոխակալ կոչեալ է։
Եւ նա, որ չորրորդ եղանի. աւագ կողմն անուանակոչի։
Եւ սա քան զերրորդ բարձրանայ. այս է, առաւել վերանայ։
Վասն որոյ այն աւագ կողմն է. որ օրհնեմք զքեզ կոչեալ է։
Եւ նա, որ հինգերորդ լինի. երրորդ ձայն անուանակոչի։
Այս քան զչորրորդ բարձրանայ. ի միասին բարականայ։
Վասն որոյ այն երրորդ ձայն է. որ որք զտանջանս կոչեալ է։
Եւ նա, որ վեցերորդ լինի. է, որ վառ անուանակոչի։
Քան զհինգերորդ բարձրանայ. և առաւել անուշանայ։
Եւ վասն այսորիկ այն վառ է. որ զինուորութիւնք կոչեալ է։
Եւ նա, որ եօթներորդ լինի. չորրորդ ձայն անուանակոչի։
Քան զվեցերորդ բարձրանայ. ի միասին նա կակղանայ։
Վասն որոյ այն չորրորդ ձայն է. որ յուսացեալքն հոշեցեալ է։
Եւ նա, որ ութերորդ լինի. է, որ վերջ անուանակոչի։
Քան զեօթներորդն վերանայ. և սա առաւել սլանայ։
Եւ վասն այսորիկ այն վերջ է. որ առ քեզ Աստուած կոչեալ է։

(Գ) Եւ ի միասին խազք լինին. որովք յիշեցեալք զարդարին։
Սոքօք, որք յիշեցան, պճնին. և ձայնք եղանակաւորին։
Ուստի ըստ որում խազք դասին. ըստ այնմ նուագք եղանին։
Մինչ զանազանապէս կարգին. զանազանք նուագք ծնանին։
Ուստի այնպէս դասելիք են. զի լինիցին, որք ախորժք են։
Զվանգս որակացուցանեն. որոց վերայ խազք եղեալք են։
Վասնզի խազք ծանուցանեն. նշանակեն, զեկուցանեն։
Զի որ վանգք անուանակոչին. այնք այնպէս արտաբերիցին։
Որպէս բնութիւն խազից է. և որպիսութիւն նոցին է։
Եւ նոցին ձևք ծանուցանեն. զայն, որ պահանջեն, ցուցանեն։
Ի շարակնոցի դտանին. անդ փափաղողաց երևին։
Ուստի անտանօր խնդրելիք. որք խազք կոչին, նշմարելիք։
Թուով քսան և չորք լինին. և այսպէս անուանակոչին։
Եւ այն շեշտ անուանակոչի. որ առաջին ենթակայի։
Սա զվանգ վերացուցանէ. և զնա բարձրացուցանէ։
Սակայն փուշ անուանակոչի. նա, որ երկրորդ ենթակայի։
Սա զվանգ փշացուցանէ. որոյ վերայ ինքն եղեալ է։
Իսկ նա բութ անուանակոչի. որ երրորդ խազ ենթակայի։
Սա զվանգ ցածացուցանէ. ի վայր խոնարհեցուցանէ։
Եւ պարոյկ անուանակոչի. նա, որ չորրորդ ենթակայի։
Սա զվանգ բարձրացուցանէ. նաև խոնարհեցուցանէ։
Նա երկար անուանակոչի. որ հինգերորդ ենթակայի։
Սա զայն երկարացուցանէ. որ վանգ յարանուանեցեալ է։
Իսկ նա սուղ անուանակոչի. որ վեցերորդ ենթակայի։
Սա զվանգ կարճացուցանէ. նա աղօտացուցանէ։
Եւ նա սուր անուանակոչի. որ եօթներորդ ենթակայի։
Զվանգ բարակացուցանէ. սրէ և նրբացուցանէ։
Եւ նա թուր անուանակոչի. որ ութերորդ ենթակայի։

Եւ սա զայն վանգ նշանակէ. որ Թրոյ նմանեցեալ է։
Եւ նա ծունկ անուանակոչի. որ իններորդ ենթակայի։
Եւ սա զվանգ նշանակէ. որ ծնկան նմանեցեալ է։
Եւ նա թաշտ անուանակոչի. որ տասներորդ ենթակայի։
Զվանգ նմանեցուցանէ. այնմիկ, որ պղնձեայ տաշտ է։
Ոլորակ անուանակոչի. որ մետասաներորդ լինի։
Զվանգ ոլորէ և մանէ. որոյ վերայ ինքն եղեալ է։
Եւ նա խունճ անուանեցեալ է. որ երկոտասաներորդ է։
Եւ արդ այս խազ զայն վանգ խնճէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Վերնախաղ անուանեցեալ է. որ երեքտասաներորդ է։
Զվանգ վերնախաղ իսկ առնէ. որոյ վերայ ինքն եղեալ է։
Ներքնախաղ անուանեցեալ է. որ չորեքտասաներորդ է։
Զվանգ ներքնախաղ իսկ առնէ. որոյ վերայ ինքն եղեալ է։
Բենկորճ յարանուանեցեալ է. որ հնգետասաներորդ է։
Քանզի զվանգ բենկորճ առնէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Խոսրովային յարանուանի. որ վեշտասներորդ լինի։
Սա ոլորաբար երկարէ. զայն վանգ, որ իսկ նշանագրէ։
Նա ծնկներ անուանակոչի. որ եօթն և տասներորդ լինի։
Վասնզի զայն կրկնապատկէ. որ ծունկ յարանուանեցեալ է
Եւ նա էկորճ յարանուանի. որ ութ և տասներորդ լինի։
Եւ սա զվանգ էկորճ առնէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Եւ նա ձակորճ յարանուանի. որ ինն և տասներորդ լինի։
Եւ սա զվանգ ձակորճ առնէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Եւ նա խում անուանակոչի. որ քսաներորդ եղանի։
Սա զվանգ խրմացուցանէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Նա փաթութ անուանակոչի. որ քսան և միերորդ լինի։
Այս է, նա փաթութ կոչեալ է. որ քսան և միերորդ է։
Քանզի զվանգ սա փաթաթէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Նա քարքաշ անուանեցեալ է. որ քսան երկուերորդ է։
Զի սա զվանգ քարքաշ առնէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Նա հուհայ անուանեցեալ է. որ քսան երեքերորդ է։
Զվանգ հուհայացուցանէ. որոյ վերայ իսկ եղեալ է։
Եւ նա զարկ անուանեցեալ է. որ քսան և չորքերորդ է։
Վասնզի սա նշանակէ. զվանգ, որ բաղխէ, հարկանէ։
Խազք զասացեալս նշանակեն. որք յիշեցան, ծանուցանեն։
Ի նախնեաց հնարեցեալք են. նաև ի գործ ածեցեալք են։
Եւ յայնց մեզ աւանդեցեալք են. և մեզ առաջադրեցեալք են։
Երգք նոցին զարդարեցեալք են. յիշեցելովք պճնեցեալք են։
Որպէս յամենայն իրս խնդրին. այսոքիկ երեք պահանջին։
Բնութիւն, և նա, որ ուսումն. նաև ի միասին վարժումն։
Այսպէս և մանաւանդ խնդրին. յերաժշտութեան պահանջին։
Նաև յայնմիկ, որ առասի. խազասացութիւն անուանի։
Նորին երեք, որք յիշեցան. արդ ի վեր յիշեցուցանեն։
Զի յարմարութիւն պահանջի. այն, որ բնական եղանի։
Զի որք անյարմարք եղանին. նոքին նուազել ոչ մարթին։
Նաև բազումք իմաստունք են. որք վայելչապէս ոչ երգեն։
Անյարմարք երգել ոչ կարեն. կամ անվայելչապէս երգեն։
Ուստի յարմարութիւն խնդրի. այն, որ բնական գտանի։
Առ այս, որ երաժշտութիւն. և կոչի խազասացութիւն։
Յարմարութիւնս բաղկանայ. ի չորից իրաց բաղկանայ։
Որք ահաւասիկ հետևին. և աստանօր առաջադրին։
Ընտրողական լսողութիւն. և լաւ երևակայութիւն։
Եւ ըմբռնող յիշողութիւն. արտաբերական զօրութիւն։
Բարեպէս արտաբերելոյ. և զձայն ելուզանելոյ։
Ի միասին այն պահանջի. որ ուսումն անուանակոչի։

Վասնզի պարտ է գտանել. կամ զգտեցեալս ուսանիլ։
Որք յասացեալս զերագանցք են. այնոքիկ գտանել կարեն։
Որք յինքեանց երգել ոչ մարթին. այնոցիկ ուսանիլ պարտին։
Որք բաղձան երգել, նուագել. զխազասացութիւն առնել։
Նաև վարժումն պահանջի. որ կրթութիւն յարանուանի։
Որք ուսեալք են, պարտին վարժել. պարտին զինքեանս կրթել, մարզել։
Քանզի եթէ զայս ոչ առնեն. որ ասացաւ, ոչ իրակեն։
Զայն, զոր ուսեալք են, մոռանան. և առ երգ անյարմարանան։
Առ երգ, առ նուագ պահանջին. որք յիշատակեցան, խնդրին։

Գլուխ երկրորդ

ՏԱԿԱՒԻՆ ՅԱՂԱԴՍ ՍԱՀՄԱՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԻԱՆ

(Դ) Ի վեր տեսաք, որպէս գտաք. ի մերայինս նշմարեցաք։
Տեսցուք, զոր նորարար ուսաք. ի վարդապետաց ընկալաք։
Համառօտագոյն ճառեսցուք. աստանօր վարդապետեսցուք։
Զայսմանէ, որ յարանուանի. երաժշտութիւն յորջորջի։
Եւ նոյնպէս աստ սահմանի. երաժշտութիւն յորջորջի։
Զի է այն, որ ուսուցանէ. ցկերպ, որ նուագելոյ է։
Ծանուցանէ, զեկուցանէ. զեղանակ, որ երգելոյ է։
Եւ աստ սկզբունք աւանդին. յորոց երգք, նուագք բաղադրին։
Սոքա, որք սկզբունք դնին. իբրև զթիւս նկատին։
Քանզի այսպէս զինքեանս ունին. որպէս նոքա, որք թիւք կոչին։
Որպէս երկրորդ, երրորդ, չորրորդ. նաև հինգերորդ, վեցերորդ։
Այսպէս եօթներորդ, ութերորդ. նաև իններորդ, տասներորդ։
Այսպէս նոքա որք հետևին. և հետևաբար յառաջին։
Եւ այնպէս առ իրեարս հային. որպէս այնք, որք թիւք անուանին։
Որպէս ի թիւս է մեծագոյն. և այն, որ կոչի փոքրագոյն։
Այսպէս յասացեալս մեծագոյն. և ի միասին փոքրագոյն։
Որպէս ի թիւս որք մեծագոյնք գրկեն զայնս, որք են փոքրագոյնք։
Նաև զաւելի ինչ ասեն. այնու քանզի մեծագոյնք են։
Այսպէս յասացեալս մեծագոյնք. գրկեն զայնս, որք են փոքրագոյնք։
Նաև զաւելի ինչ ասեն. այնու քանզի մեծագոյնք են։
Որզան, զայնքան և կէս նորին. զայնքան զերրորդ մասն նորին։
Եւ այսպէս զայլոց ճառելի. ասելի, վարդապետելի։
Ի թիւս որպէս կարգաւ գրկեն. այնոքիկ, որք մեծագոյնք են։
Այսպէս և յասացեալս գրկեն. հանդերձ կարգաւ պարունակեն։
Այնոքիկ, որ մեծագոյնք են. զայնոսիկ, որ փոքրագոյնք են։
Արդ սկզբունք ութ նկատին. արձակարար այսքանք դնին։
Վասն այսորիկ ութ ձայնք կոչին. քանզի ի ձայնս գտանին։
Քանզի ի ձայնս կայանան. յայնց բաղկանան և գոյանան։
Այնք, որք բարձրանան, մեծագոյնք. և որք ցածանան, փոքրագոյնք։
Որ առաջին, ցածագունեղ. նա, որ վերջին բարձրագունեղ։
Եւ որք առաջնոյ մերձագոյնք. այնոքիկ կարգաւ ցածագոյնք։
Եւ որք վերջնոյ են մերձագոյնք. այնոքիկ կարգաւ բարձրագոյնք։
Վասնզի կարգաւ բարձրանան. իբրև զթիւս մեծանան։
Եւ երբ յառաջնոյ ելանեն. և առ վերջին գնալ դիտեն։
Կարգաւ բարձրանան, մեծանան. բայց երբ իջանեն, ցածանան։
Ցայնմանէ, որ վերջին լինի. առ այն, որ առաջին դնի։
Վասն որոյ կարգաւ գիծք բարշին. և յիշեցեալք նշանագրին։
Նաև զանուանս ընդունին. զի այնք ճանաչիլ մարթիցին։
Որք շուտարար արտարերին. կիսաձայնք անուանակոչին։
Եւ որք երկարարար ասին. ամբողջք ձայնք անուանակոչին։
Եւ ի յասացելոց լինին. նաև այլք չորք ձայնք բաղադրին։

Ուստի երկոտասան լինին. երկոտասան ձայնք եղանին։
Այնու կարգաւ, որ յիշեցեալ. և ի վեր յիշատակեցեալ։
Այնք, որք բացարձակք, ութ գնին. որք խառնեցեալք են, չորք լինին։
Ուստի ութ և չորք ժողովին. թուով երկոտասան լինին։
Այսք գլխաւորք կանոնք գնին. և սկզբունք առաջադրին։
Երբ յիշեցեալք համաձայնին. յարմարարար շարամանին։
Ջանազանք նուագք ծնանին. և այնք, որք երգք յարանուանին։
Սեռք երաժշտութեան բղխին. և յանդիման կացուցանին։
Ընդ որովք զանազանք գրկին. տեսակք նուագաց ներփակին։
Արդ բանք նոցին նկատելիք. մտադրաբար նշմարելիք։
Որք զայսմանէ վարդապետեն. մանրամասնաբար ընձեռեն։
Համառօտաբար ճառեցաք. աստանօր վարդապետեցաք։
Ջանմանէ, որ յարանուանի. երաժշտութիւն յորջորջի։
Անցցուք առ այն, որ անուանի. ընդհայեցողութիւն կոչի։

Н. К. ТАКМИЗЯН

ХАЧАТУР ЭРЗРУМЕЦИ КАК ТЕОРЕТИК СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ МУЗЫКИ

Резюме

В объемистом труде Хачатура Эрзрумеци «Сущность всех наук» (Венеция, 1711), имеется содержательный раздел, озаглавленный «О музыке», ускользнувший от внимания армянских музыковедов и по сие время не вошедший в научное обращение. Он состоит из двух глав: «Об определении музыки» и «Еще об определении музыки», но по существу делится на четыре подраздела.

В первом из них автор затрагивает вопросы этического и эстетического воздействия музыки, а также вопросы одаренности и воспитания музыкантов, впервые, за период армянского позднего средневековья, возрождая идеи армянских мыслителей X—XV и даже V—VI веков и по-своему развивая их.

Второй подраздел посвящен основам армянского восьмигласия. Здесь особо важен тот факт, что, по словам Хачатура Эрзрумеци, система армянских средневековых восьми гласов представляет собой и некую тональную систему. Гласы, начиная от Первого и кончая Четвертым Побочным, образуют некий поступенно восходящий ряд.

В третьем подразделе наш философ толкует об армянских хазах (невмах). Он утверждает, что основных хазов всего 24, перечисляет их и объясняет их значения. Не все приводимые здесь объяснения отличаются ясностью. Но некоторые из них проливают определенный свет на пока что нерасшифрованную систему хазов и, тем самым, заслуживают пристального внимания.

Наконец, четвертый подраздел, в котором автор, покидая область армянской средневековой музыки, переходит к освещению европейской системы нотации, показывает, что в армянских научных кругах с этой системой ознакомились в начале не XIX, как было принято считать, а XVIII столетия.